# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հոկտեմբերի 2022 թվականի թիվ 407-Ա

## «ԴԱՆԻՆԻ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ, «ՏՈՒՄՈԵ», «ՖՈՒԴՍԻԹԻ», «ՋՈՒԶԵՊՊԵ» ԵՎ «ԽԱՉՄԻՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հոկտեմբերի 25-ի նիստում, քննարկելով ««Դանինի» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման, «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ բոլորը միասին՝ **Ընկերություններ**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

***1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.***

Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 14-ի ««Դանինի» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանում (այսուհետ նաև՝ **«Դանինի» ընկերություն**), «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ նաև՝ **«Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» ընկերություններ**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 218-Ա (այսուհետ նաև՝ **Թիվ 218-Ա որոշում**) որոշմամբ հարուցել է վարույթ (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Թիվ 218-Ա որոշումը Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2022 թվականի հունիսի 22-ի թիվ ՄՊՀ-002782, ՄՊՀ-002783, ՄՊՀ-002784, ՄՊՀ-002785 և ՄՊՀ-002786 կից գրություններով (այսուհետ նաև՝ **թիվ ՄՊՀ-002782, ՄՊՀ-002783, ՄՊՀ-002784, ՄՊՀ-002785 և ՄՊՀ-002786 գրություններ**) ուղարկվել են համապատասխանաբար «Դանինի», «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» ընկերություններին:

«Դանինի» ընկերությունը «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության ծանուցագրի համաձայն ստացել է թիվ ՄՊՀ-002782 գրությունը 2022 թվականի հունիսի 28-ին:

Թիվ ՄՊՀ-002783, ՄՊՀ-002784, ՄՊՀ-002785 և ՄՊՀ-002786 գրությունները առաքվել են «Տումոե», «Ֆուդսիթի», «Զուզեպպե» և «Խաչմիք» ընկերությունների հաշվառման հասցեներով, սակայն «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության ծանուցագրերի համաձայն չեն հանձնվել և վերադարձվել են:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 45-րդ հոդվածի 11-րդ մասով՝ թիվ 218-Ա որոշումը և թիվ ՄՊՀ-002782 գրությունը 2022 թվականի հուլիսի 11-ին, իսկ թիվ ՄՊՀ-002783, ՄՊՀ-002784, ՄՊՀ-002785 և ՄՊՀ-002786 գրությունները 2022 թվականի հուլիսի 28-ին հրապարակվել են «www.azdarar.am» կայքում և Հանձնաժողովի պաշտոնական կայքում (competition.am):

Հետևաբար, 2022 թվականի հուլիսի 11-ին թիվ 218-Ա որոշումը՝ թիվ ՄՊՀ-002782 գրությամբ և 2022 թվականի հուլիսի 28-ին թիվ ՄՊՀ-002783, ՄՊՀ-002784, ՄՊՀ-002785 և ՄՊՀ-002786 գրություններով, համարվել է համապատասխանաբար «Տումոե», «Ֆուդսիթի», «Զուզեպպե» և «Խաչմիք» ընկերություններին պատշաճ հանձնված:

## *2. <u>Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.</u>*

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության երկրորդ բաժինը թիվ ՄՊՀ-001355/12-05-2022 զեկուցագրով (այսուհետ նաև՝ **Զեկուցագիր**) Հանձնաժողովին առաջարկել է «Դանինի», «Տումոե» և «Ֆուդսիթի» ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում հնարավոր իրավախախտումների հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ՝ հայտնելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ **Նախարարություն**) կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի շրջանակներում «Դանինի», «Տումոե» և «Ֆուդսիթի» ընկերությունների կողմից պայմանավորվածություն ձեռք բերված լինելու մասին վկայող հանգամանքներ:

Վարույթը հարուցվել է Ընկերությունների վարքագծում և գործողություններում հորիզոնական հակամրցակցային համաձայնության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

## *3. <u>Ընկերությունների դիրքորոշումը.</u>*

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2022 թվականի հունիսի 22-ի թիվ ՄՊՀ-002782, ՄՊՀ-002783, ՄՊՀ-002784, ՄՊՀ-002785 և ՄՊՀ-002786 գրություններով համապատասխանաբար «Դանինի», «Տումոե», «Ֆուդսիթի», «Զուզեպպե» և «Խաչմիք» ընկերություններին առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել դիրքորոշում, սակայն Ընկերությունները դիրքորոշում չեն ներկայացրել:

4. ***Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը***.

Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 22-ի թիվ ՄՊՀ-002841 գրությամբ դիմել է Պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ նաև՝ Կոմիտե) հետևյալ հարցերի շուրջ փոխօգնություն ստանալու նպատակով.

1. Ընկերությունների կողմից և Ընկերություններին դուրս գրված հաշիվ-վավերագրերը ստորագրած անձանց վերաբերյալ.
2. Ընկերությունների կողմից դուրս գրված ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված գործարքների վերաբերյալ, այդ թվում՝ ՀԴՄ-ների տեսակները և գրանցման հասցեները, գործող և գործողությունից հանված կտրոնների վերաբերյալ.
3. Ընկերություններին պատկանող պահեստների վերաբերյալ.
4. Ընկերությունների պահեստներ ապրանքների առաքման մեթոդների վերաբերյալ.
5. Այն ֆիզիկական անձանց պաշտոնների, ինչպես նաև վերջիններիս աշխատանքի ընդունման և ազատման ամսաթվերի վերաբերյալ, որոնք 2021 թվականից 2022 թվականների ընթացքում միաժամանակ աշխատել են կամ աշխատում են Ընկերություններից առնվազն երկուսում.
6. Վարույթի շրջանակներում վերաբերելի այլ տեղեկատվություն:

Ի պատասխան Հանձնաժողովի վերոնշյալ գրության Պետական եկամուտների կոմիտեն 2022 թվականի հունիսի 30-ի թիվ 01/71-6/46401-2022 գրությամբ տրամադրել է տեղեկատվություն Ընկերությունների կողմից և Ընկերություններին դուրս գրված հաշիվ-վավերագրերը ստորագրած անձանց և Ընկերությունների աշխատակիցների վերաբերյալ, ինչպես նաև հայտնել է, որ Ընկերությունները չունեն գրանցված հսկիչ դրամարկղային մեքենաներ:

Մասնավորապես՝ Կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝

1. Ֆիզիկական անձ Արտաշես Աբգարի Մկրտչյանը 2013 թվականին աշխատել է «Դանինի» ընկերությունում որպես հաշվապահ, իսկ 2019 թվականի փետրվարի 2-ից 2020 թվականի մարտի 20-ն ընկած ժամանակատվածում՝ որպես մենեջեր: Միևնույն ժամանակ, վերջինս 2021 թվականի օգոստոսի 20-ից մինչ օրս աշխատում է «Ֆուդսիթի» ընկերությունում որպես մենեջեր, 2022 թվականի մայիսի 2-ից մինչ օրս աշխատում է «Ջուզեպպե» և «Խաչմիք» ընկերություններում համապատասխանաբար որպես մենեջեր և հաշվապահ:
2. Ֆիզիկական անձ Լաուրա Գուրգենի Վարդանյանը 2021 թվականի հուլիսի 19-ից և 2022 թվականի հունվարի 21-ից մինչ օրս աշխատում է համապատասխանաբար «Դանինի» և «Ֆուդսիթի» ընկերություններում որպես գնումների գործակալ, իսկ 2022 թվականի ապրիլի 4-ից մինչ օրս՝ նաև «Խաչմիք» ընկերությունում որպես գնումների մասնագետ:
3. Ֆիզիկական անձ Ելիզավետա Արտյոմի Սարգսյանը 2020 թվականի ապրիլի 15-ից մինչև 2021 թվականի ապրիլի 16-ն ընկած ժամանակատվածում աշխատել է

«Դանինի» ընկերությունում որպես մենեջեր, իսկ 2021 թվականի ապրիլի 12-ից մինչ օրս աշխատում է «Տումոե» ընկերությունում որպես տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Հանձնաժողովը 2022 թվականի հուլիսի 4-ի թիվ ՄՊՀ-003194 գրությամբ դիմել է Ֆինանսների նախարարությանը՝ Ընկերությունների կողմից պետական գնումների շրջանակներում հայտերի ներկայացման Այ-Փի հասցեների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Ֆինանսների նախարարությունը 2022 թվականի հուլիսի 25-ի թիվ 03/26/12998-2022 գրությամբ Հանձնաժողովին է տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունները գործել են նույն սերվերից:

**5. *<u>Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>***

1. «Դանինի» ընկերությունը հիմնադրվել է 2009 թվականին չեխական «Դանինի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից և վերջինիս տնօրենն է ֆիզիկական անձ Աղասի Շավարշի Դանիելյանը:
2. «Տումոե» ընկերությունը հիմնադրվել է 2004 թվականին և 2020 թվականից ընկերության սեփականատերը և տնօրենն է ֆիզիկական անձ Ջանիբեկ Գուրգենի Թովմասյանը:
3. «Ֆուդսիթի» ընկերությունը հիմնադրվել է 2021 թվականին: Ընկերության սեփականատերը և տնօրենն է հանդիսանում Արտաշես Աբգարի Մկրտչյանը:
4. «Ջուզեպպե» ընկերությունը հիմնադրվել է 2022 թվականին: Ընկերության սեփականատերը և տնօրենը ևս հանդիսանում է Արտաշես Աբգարի Մկրտչյանը:
5. «Խաչմիք» ընկերությունը հիմնադրվել է 2021 թվականին: Ընկերության սեփականատերը և տնօրենն է հանդիսանում Խաչիկ Կարապետի Միքայելյանը:
6. «Հաղթանակ-2000» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրվել է 1997 թվականին և ընկերության սեփականատերն է Շավարշ Դանիելյանը, իսկ տնօրենը՝ Անդրանիկ Շավարշի Դանիելյանը:
7. «Մակրո Ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրվել է 2014 թվականին: Ընկերության տնօրենը 2018 թվականից հանդիսանում է Աղասի Դանիելյանը, իսկ սեփականատերը՝ Աբրահամ Մովսեսի Հանեշյանը:
8. «Հանեշ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրվել է 2009 թվականին: Ընկերության ներկայիս տնօրենը և սեփականատերն է Աղասի Դանիելյանը, իսկ նախկին տնօրենը և սեփականատերը՝ Աբրահամ Մովսեսի Հանեշյանը:
9. Ֆիզիկական անձինք Անդրանիկ Շավարշի Դանիելյանը, Աղասի Շավարշի Դանիելյանը և Շավարշ Դանիելյանը բնակվում են նույն՝ Վրթ. Փափազյան փ., տուն 57 հասցեում:

10. Անձնագրային տվյալների համաձայն՝ Անդրանիկ Դանիելյանը և Աղասի Դանիելյանը եղբայրներ են:

11. Անդրանիկ Շավարշի Դանիելյանի կինը՝ Ելիզավետա Արտյոմի Սարգսյանը 2020 թվականի ապրիլի 15-ից մինչև 2021 թվականի ապրիլի 16-ն ընկած ժամանակատվածում աշխատել է «Դանինի» ընկերությունում որպես մենեջեր, իսկ 2021 թվականի ապրիլի 12-ից մինչ օրս աշխատում է «Տումռե» ընկերությունում՝ որպես տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

12. Աղասի Շավարշի Դանիելյանը հանդիսացել է «Տումռե» ընկերության սեփականատերը 2006-ից 2011 թվականներին և տնօրենը՝ 2005-ից 2011 թվականներին:

13. Ֆիզիկական անձ Արտաշես Աբգարի Մկրտչյանը աշխատել է և/կամ աշխատում է Աղասի և Անդրանիկ Դանիելյաններին պատկանող ընկերություններում, մասնավորապես՝

- 2019 թվականի փետրվարի 2-ից մինչև 2020 թվականի մարտի 20-ը աշխատել է «Դանինի» ընկերությունում՝ որպես առևտրի մենեջեր:
- 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հունվարի 31-ը աշխատել է «Մակրո Ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում՝ որպես հաշվապահ:
- 2021 թվականի օգոստոսի 20-ից մինչ օրս աշխատում է «Ֆուդսիթի» ընկերությունում՝ որպես մենեջեր:
- 2022 թվականի մայիսի 2-ից մինչ օրս աշխատում է «Ջուզեպպե» ընկերությունում՝ որպես մենեջեր:
- 2022 թվականի մայիսի 2-ից մինչ օրս աշխատում է «Խաչմիք» ընկերությունում՝ որպես հաշվապահ:
- 2021 թվականի հունվարի 22-ից մինչ օրս աշխատում է «Հաղթանակ-2000» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում՝ որպես մենեջեր:

14. Արտաշես Մկրտչյանի կինը՝ Լաուրա Գուրգենի Վարդանյանը ևս աշխատել է և/կամ աշխատում է Աղասի և Անդրանիկ Դանիելյաններին պատկանող ընկերություններում, մասնավորապես՝

- 2021 թվականի հուլիսի 19-ից մինչ օրս աշխատում է «Դանինի» ընկերությունում՝ որպես գնումների գործակալ:
- 2021 թվականի հունվարի 21-ից մինչ օրս աշխատում է «Ֆուդսիթի» ընկերությունում՝ որպես գնումների գործակալ:
- 2022 թվականի ապրիլի 5-ից մինչ օրս աշխատում է «Խաչմիք» ընկերությունում՝ որպես գնումների մասնագետ:

15. Արտաշես Մկրտչյանին պատկանող «Սմարթ Լոջիսթիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավաբանական հասցեում՝ ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 24/7 գտնվող անշարժ գույքը պատկանում է Աղասի Դանիելյանին:

16. Ընկերությունները հայտեր են ներկայացրել Նախարարության և այլ պատվիրատուների կողմից կազմակերպված մի շարք գնման ընթացակարգերի, ինչպես

նաև վերջիններիս չկայացած հայտարարվելու դեպքում նաև վերահրապարակված ընթացակարգերի շրջանակներում:

17. Նախարարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 12-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-2» գնման ընթացակարգի շրջանակներում «Ֆուդսիթի» ընկերության տնօրեն Արտաշես Մկրտչյանը 2021 թվականի նոյեմբերի 15-ին լիազորել է Աղասի Դանիելյանին էլեկտրոնային եղանակով իր նույնականացման քարտով ստորագրել «Ֆուդսիթի» ընկերության փաստաթղթերը էլեկտրոնային գնումների բոլոր մրցույթների շրջանակներում:

18. Հրազդանի համայնքապետարանի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 27-ին հայտարարված «ԿՄՀՔ-ԷԱճԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Տումոե» ընկերության տնօրեն Ջանիբեկ Թովմասյանը 2021 թվականի դեկտեմբերի 1-ին լիազորել է ֆիզիկական անձ Անդրանիկ Շավարշի Դանիելյանին էլեկտրոնային եղանակով իր նույնականացման քարտով ստորագրել «Տումոե» ընկերության փաստաթղթերը էլեկտրոնային գնումների բոլոր մրցույթների շրջանակներում:

19. Նախարարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 6-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-ԵԽ», 2022 թվականի հունվարի 21-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-ԵԽ-1» և 2022 թվականի հունվարի 22-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-4» գնման ընթացակարգերին հայտ են ներկայացրել «Տումոե» և «Ֆուդսիթի» ընկերությունները՝ հայտերում ներկայացնելով 010 62 49 66 հեռախոսահամարը:

20. Նախարարության կողմից 2022 թվականի փետրվարի 1-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-Վ-1» գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Տումոե», «Ֆուդսիթի» և «Խաչմիք» ընկերությունները՝ հայտերում ներկայացրնելով 010 62 49 66 հեռախոսահամարը:

21. Նախարարության կողմից հայտարարված 2021 թվականի նոյեմբերի 15-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ», 2021 թվականի նոյեմբերի 14-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ», 2021 թվականի դեկտեմբերի 12-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-3», 2021 թվականի նոյեմբերի 11-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ» և 2021 թվականի դեկտեմբերի 5-ին «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ» գնման ընթացակարգերին հայտ են ներկայացրել «Դանինի» և «Ֆուդսիթի» ընկերությունները՝ հայտերում ներկայացնելով 010 62 49 66 հեռախոսահամարը:

22. «Զուգեպպե» ընկերությունը մասնակցել է Նախարարության, ինչպես նաև այլ պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերին՝ հայտերում նշելով 010 62 49 66 հեռախոսահամարը:

23. Նախարարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 2-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-2» գնման ընթացակարգի շրջանակներում «Դանինի»

ընկերությունը սեփական հայտի փոխարեն կցել է «Ֆուդսիթի» ընկերության կողմից լրացված մասնակցության հայտ:

24. Նախարարության կողմից 2022 թվականի փետրվարի 1-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-Վ-1» գնման ընթացակարգի շրջանակներում «Խաչմիք» ընկերությունը սեփական հայտի փոխարեն կցել է «Տումոե» ընկերության կողմից լրացված մասնակցության հայտ:

25. Նախարարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 1-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/44» գնման ընթացակարգի շրջանակներում «Խաչմիք» ընկերությունը սեփական հայտի փոխարեն կցել է «Ֆուդսիթի» ընկերության կողմից լրացված մասնակցության հայտ: «Ֆուդսիթի» ընկերությունը տվյալ ընթացակարգին չի մասնակցել:

26. Ընկերությունները՝ մասնակցելով գնման ընթացակարգերին, ներկայացրել են հրավերների պահանջներին անհամապատասխան հայտեր, ինչի արդյունքում ընդգրկվել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում (այսուհետ նաև՝ **Ցուցակ**): Այնուհետև, Ցուցակում հայտնվելուց հետո վերջիններս 2021 թվականի նոյեմբերից 2022 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում շարունակաբար մասնակցել են գնման ընթացակարգերի՝ ներկայացնելով գնման ընթացակարգերի հրավերների պահանջներին անհամապատասխան հայտեր:

***6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.***

***1) Ապրանքային շուկա սահմանելու հարցի կապակցությամբ.***

*ա. Ապրանքային շուկայի հապկորոշումը.*

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ապրանքը քաղաքացիական իրավունքի օբյեկտ է, այդ թվում՝ գույք, աշխատանք, ծառայություն (ներառյալ՝ ֆինանսական), որը նախատեսված է իրացման համար: Փոխադարձ փոխարինելի ապրանքները այն ապրանքներ են, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշներով այնպես, որ ձեռք բերողը սպառման գործընթացում կամ արտադրական նպատակներով օգտագործման ընթացքում փաստացի փոխարինում է կամ պատրաստ է փոխարինելու դրանք մեկը մյուսով:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ փոխադարձ փոխարինելի ապրանքները ապրանքներ են, որոնք կարող են համեմատվել ըստ իրենց գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային կամ այլ հատկանիշներով այնպես, որ ձեռք բերողը սպառման գործընթացում կամ արտադրական նպատակներով օգտագործման ընթացքում փաստացի փոխարինում է կամ պատրաստ է փոխարինելու դրանք մեկը մյուսով:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկան Հանձնաժողովի որոշմամբ սահմանված՝ որոշակի տարածքում ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ է, որի սահմանները որոշվում են համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման, իրացման կամ արտադրման, տնտեսական կամ այլ հնարավորություններով կամ նպատակահարմարությամբ և դրա սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունների կամ նպատակահարմարության բացակայությամբ: Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, ուսումնասիրության ժամանակահատվածով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների ամբողջությունն է:

«Սոցիալական աջակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանվում են սոցիալական ծառայությունների, սոցիալական աջակցության և ինտեգրված սոցիալական ծառայությունների հասկացությունները, հիմնական սոցիալական ծառայությունները, դրանց դասակարգման հիմքերը և տրամադրող սուբյեկտները, սոցիալական ծառայությունների տրամադրման և սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները, սոցիալական աջակցության իրավունքը, նպատակը, սոցիալական աջակցության կառավարման համակարգը, սոցիալական աջակցություն ստացող անձանց իրավունքները և պարտականությունները, սոցիալական աջակցության ֆինանսավորման աղբյուրները, կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում սոցիալական համագործակցության, տեղական սոցիալական ծրագրերի իրականացման և սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված այլ հարաբերություններ:

«Սոցիալական աջակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սոցիալական ծառայությունները, ըստ տրամադրողի (տրամադրող սուբյեկտի), դասակարգվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող սոցիալական ծառայություններ.

2) տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրամադրվող սոցիալական ծառայություններ.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից տրամադրվող սոցիալական ծառայություններ:

«Սոցիալական աջակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խնամքը տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաներին, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև հիվանդության (ոչ բարենպաստ ելքի կանխատեսումով) վերջին շրջանում գտնվող անձին և նրա ընտանիքին՝ ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ ապահովելու կամ տարեց և

(կամ) հաշմանդամություն ունեցող կամ հիվանդ անձանց իրենց հարազատ սոցիալական միջավայրում հնարավորինս երկար պահելու կամ հասարակությունում ներառելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է:

«Սոցիալական աջակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խնամքը տրամադրվում է սննդի, այդ թվում՝ դիետիկ, բժշկական, հիգիենայի պարագաների, հագուստի, կոշիկի և առաջին անհրաժեշտության այլ պարագաների տրամադրման, սոցիալ-հոգեբանական, մշակութային, կրթական, ժամանցի, անհրաժեշտության դեպքում՝ բժշկական շարունակական հսկողության և հիվանդանոցային բուժման, իրավական օգնության և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ տուն-ինտերնատներին, հոգեկան խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոններին, մանկատներին և այլ նմանատիպ հաստատություններին սոցիալական աջակցությունը, մասնավորապես՝ վերոնշյալ հաստատությունների կարիքների համար սննդի մատակարարումը իրականացվում է այդ թվում և Նախարարության կողմից:

«Գնումների մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

«Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պատվիրատու են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետության կամ համայնքների հիմնարկներ:

Այսինքն՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այդ թվում՝ Նախարարության կողմից ապրանքների ձեռքբերումն իրականացվում է «Գնումների մասին» օրենքով նախատեսված հատուկ կարգավորումներին համապատասխան:

Ընդ որում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Նախարարությունը վերը նշված հաստատություններին սոցիալական աջակցության տրամադրման նպատակով «Գնումների մասին» օրենքի դրույթների համաձայն գնման ընթացակարգերի շրջանակներում ձեռք է բերում սննդամթերք: Ընդ որում, սննդամթերքի մատակարարումներն իրականացվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված

պահանջներին բավարարող տնտեսավարող սուբյեկտների կողմից: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով Նախարարության կողմից ձեռքբերվող սննդամթերքի շահառուների խումբը, ինչպես նաև սննդամթերքի մատակարարման օբյեկտների տարածքային բաշխվածությունը, կարելի է եզրակացնել, որ Նախարարության կողմից «Գնումների մասին» օրենքի շրջանակում ձեռքբերվող սննդամթերքը փոխադարձ փոխարինելի չէ այլ պետական մարմինների կողմից ձեռքբերվող սննդամթերքի հետ: Մասնավորապես՝ Նախարարությունը ձեռք է բերում սննդամթերք վերջինիս ենթակա և Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում տեղակայված տուն-ինտերնատներում, հոգեկան խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոններում, մանկատներում և այլ նմանատիպ հաստատություններում գտնվող սոցիալական աջակցության և խնամքի կարիք ունեցող անձանց համար: Այսինքն՝ Նախարարության կողմից «Գնումների մասին» օրենքի դրույթների համաձայն սննդամթերքի ձեռքբերումը չի կարող համեմատվել այլ եղանակներով և այլ սուբյեկտների՝ այդ թվում պետական մարմինների, կողմից ձեռքբերվող ապրանքների հետ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Նախարարության կողմից Նախարարության և վերջինիս ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով գնումների կազմակերպման առանձնահատկությունները, Հանձնաժողովը դիտարկել է հետևյալ ապրանքային շուկան.

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և վերջինիս ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար սննդամթերքի մատակարարում» ապրանքային շուկան (այսուհետ նաև՝ **Ապրանքային շուկա**), իսկ դրա ապրանքատեսակային սահմանն է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և վերջինիս ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար անհրաժեշտ սննդամթերքի մատակարարման ծառայությունների ամբողջությունը:

*բ. Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը.*

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը որոշակի աշխարհագրական տարածք է (այդ թվում՝ ճանապարհ, օդային, ջրային, ցամաքային և այլ երթուղի), որի շրջանակում տնտեսապես հնարավոր կամ նպատակահարմար է ձեռք բերել, իրացնել կամ արտադրել տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքները, և առկա չէ այդ հնարավորությունը կամ նպատակահարմարությունը տվյալ տարածքից դուրս: Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը կարող է ներառել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը կամ դրա մի մասը կամ Հայաստանի Հանրապետության (կամ դրա մի մասի) և այլ պետության (կամ դրա մի մասի) տարածքը:

Նախարարությանն ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունները գտնվում են Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում: Այսինքն՝ սննդամթերքի ձեռքբերումը հնարավոր և նպատակահարմար է Հայաստանի

Հանրապետության ողջ տարածքում: Հետևաբար, Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանն է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը:

*գ. Ապրանքային շուկայի սուբյեկտների կազմը.*

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի սուբյեկտները տվյալ ապրանքը և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներն իրացնողները, արտադրողները կամ ձեռք բերողներն են:

«Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման գործընթացներին կարող է մասնակցել ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում, Ապրանքային շուկայում գործում և Նախարարության սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգերին մասնակցում են տասնյակից ավել ընկերություններ, իսկ որպես պատվիրատու հանդես է գալիս միայն Նախարարությունը:

*դ. Ապրանքային շուկայի ուսումնասիրվող ժամանակահատվածը.*

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատվածը այն որոշակի ժամանակահատվածն (օր, ամիս, տարի) է, որի շրջանակում ուսումնասիրվում է ապրանքային շուկան:

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Նախարարության կողմից հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում Ընկերությունները մասնակցություն են ունեցել, ինչպես նաև դրսևորել են սույն վարույթի շրջանակում քննարկվող վարքագիծը 2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, ուստի գործի շրջանակներում Ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակահատվածն է 2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածը:

***2) Ընկերությունների կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.***

Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը: Միաժամանակ ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ. այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակից ելնելով, իսկ այդ երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում մրցակցային միջավայրի կառուցումն այն հիմնական ուղիներից մեկն է, որով հնարավոր է բարձրացնել հասարակության բարեկեցությունը: Վերոնշյալ սկզբունքների հավասարակշռմանն ու ազատ տնտեսական մրցակցության գոյության համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանն են ուղղված Օրենքի իրավակարգավորումները, որոնցով արգելվում են տնտեսվարող սուբյեկտների՝ տնտեսությանը վնաս հասցնող, մրցակցությունը սահմանափակող կանխող, արգելող և անբարեխիղճ մրցակցության գործողությունները կամ վարքագիծը:

Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքը տարածվում է տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների, վարքագծի կամ ակտերի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Օրենքի 5-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը) արգելվում է:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց բանավոր կամ գրավոր այն համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսավարող

սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքերի:

Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են համակամրցակցային համաձայնությունների տեսակները, որոնց թվում է միևնույն ապրանքային շուկայում գործող հնարավոր կամ փաստացի մրցակից հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված համաձայնությունը, որն առկա է, եթե համաձայնությունն առնչվում է տվյալ ապրանքային շուկային (հորիզոնական համաձայնություն):

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հորիզոնական հակամրցակցային համաձայնությունները կարող են մասնավորապես վերաբերել՝

1) ապրանքային շուկան կամ մատակարարման աղբյուրները բաշխելուն կամ բաժանելուն՝ ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալի կամ ապրանքի տեսականու կամ իրացնողների կամ ձեռք բերողների խմբերի կամ տարածքային սկզբունքի կամ այլ եղանակի.

2) այլ տնտեսավարող սուբյեկտների՝ ապրանքային շուկա մուտք գործելուն կամ ապրանքային շուկայից ելքը խոչընդոտելուն (շուկա մուտք գործելը կամ շուկայից ելքը սահմանափակելուն) կամ շուկայից նրանց դուրս մղելուն.

3) ապրանքների գների չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

4) իրացման կամ ձեռքբերման գների, դրույքաչափերի, զեղչերի, հավելաճի, արտոնությունների կամ առևտրի այլ պայմանների համաձայնեցված ուղղակի կամ անուղղակի սահմանմանը, փոփոխմանը կամ պահպանմանը.

5) արտադրանքի, մատակարարման, տեխնիկական զարգացման կամ արդիականացման, ներմուծման, առևտրի կամ ներդրումների սահմանափակմանը կամ վերահսկմանը.

6) ի վնաս սպառողի շահերի՝ ապրանքների ներկրմանը կամ արտադրության չհիմնավորված կրճատմանը կամ դադարեցմանը կամ ապրանքները պահելու, փչացնելու կամ ոչնչացնելու միջոցով կամ այլ ձևով ապրանքային շուկայում պակասուրդի ստեղծմանը կամ պահպանմանը.

7) պետական գնումների կամ մրցույթների կամ աճուրդների պայմանների կամ արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությանը կամ արդյունքների կեղծմանը (խեղաթյուրմանը) կամ ապրանքի գնի չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

8) որոշակի իրացնողների կամ ձեռք բերողների հետ առևտրային գործունեությունը չկազմակերպելու պայմանավորվածությանը.

9) միևնույն ապրանքի համար խտրական պայմաններ առաջարկելուն կամ կիրառելուն.

10) պայմանագրի կողմին, ներառյալ՝ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորություններ պարտադրելուն, որոնք տնտեսապես կամ տեխնոլոգիապես հիմնավորված և շահավետ չեն նրա համար կամ իրենց բնույթով, կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ.

11) որոշակի իրացնողների կամ ձեռք բերողների հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չմտնելու, կամ պայմանագրային հարաբերությունները դադարեցնելու կամ կասեցնելու պարտադրմանը.

12) հակամրցակցային համաձայնության մասնակցին (մասնակիցներին) պատկանող փոխանցման ցանցերը, այլ բաշխիչ ցանցերը կամ այլ ենթակառուցվածքները ողջամիտ վճարի կամ պայմանի դիմաց այլ տնտեսավարող սուբյեկտներին (սուբյեկտին) օգտագործելու կամ շահագործելու թույլտվություն կամ հասանելիություն չտալուն, եթե այդ տնտեսավարող սուբյեկտներն օբյեկտիվորեն չեն կարող այլ տնտեսավարող սուբյեկտներից ստանալ այդ փոխանցման ցանցերի, այլ բաշխիչ ցանցերի կամ այլ ենթակառուցվածքների շահագործման կամ օգտագործման թույլտվությունը կամ հասանելիությունը, և առանց դրա հնարավոր չէ գործունեություն իրականացնել ապրանքային շուկայում.

13) այլ պայմանների կամ վարքագծի, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է հակամրցակցային համաձայնության ընդհանուր սահմանումը, ինչպես նաև հակամրցակցային համաձայնությունների առանձին ոչ սպառիչ դրսևորումները, որոնց վերլուծությունից բխում է, որ, ի թիվս այլնի, հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսավարող սուբյեկտների ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը: Ընդ որում, հակամրցակցային համաձայնության առկայությունը հաստատելու համար բավարար է փաստել տնտեսվարող սուբյեկտների համաձայնեցված գործողությունների կամ վարքագծի, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումների մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը հանգեցնելու հնարավորությունը: Միաժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված յուրաքանչյուրի դրսևորում ինքնին առնվազն առաջացնում է մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը հանգեցնելու հնարավորություն:

Շարադրվածի համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ գնումների մասին օրենսդրության համատեքստում հորիզոնական հակամրցակցային համաձայնությանն առնչվող առանձնահատուկ դրսևորման վերլուծությանը:

Այսպես, «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

«Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.

2) սույն օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մասնակցության դեպքերի:

Վկայակոչված դրույթներից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է գնումների գործընթացում հավասարության սկզբունքը, որի ապահովմանն, ի թիվս այլնի, ուղղված է գնման միևնույն գործընթացին փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության արգելքը:

Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության իմաստով փոխկապակցված անձանց հասկացությունը սահմանված է Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168 Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման թիվ 2 հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ **թիվ 526-Ն որոշում**) 119-րդ մասով: Մասնավորապես՝ թիվ 526-Ն որոշման 119-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Շարադրված կարգավորումներից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտների փոխկապակցվածության չափանիշը ուղղակի կամ անուղղակի ձևով սահմանված ընդհանուր տնտեսական շահերն են:

Նման պայմաններում Հանձնաժողովն արձանագրում է, որ վկայակոչված դեպքերից առնվազն մեկի առկայության պայմաններում անձինք համարվում են փոխկապակցված, որպիսի պարագայում փոխկապակցված տնտեսավարող սուբյեկտների կողմից գնման միևնույն գործընթացին մասնակցելը ինքնին մրցակցությունը կանխող, սահմանափակող կամ արգելող ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողություն կամ վարքագիծ է՝ հորիզոնական հակամրցակցային համաձայնություն: Հետևաբար, քանի դեռ կոնկրետ գործի շրջանակներում հաստատված չէ հակառակը, փոխկապակցած անձանց՝ գնման միևնույն գործընթացին մասնակցելու դեպքում գործում է **«հորիզոնական հակամրցակցային համաձայնության առկայության»** կանխավարկածը:

Հաշվի առնելով, որ Ընկերությունները 2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2022 թվականի հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել են Նախարարության կողմից էլեկտրոնային աճուրդի ձևով հայտարարված գնման ընթացակարգերին, Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև էլեկտրոնային աճուրդի ձևով կազմակերպվող գնման ընթացակարգերի առանձնահատկություններին:

Այսպես, «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը՝ էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը:

«Գնումների մասին» օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկվում է էլեկտրոնային ձևով նոր (վերանայված) գներ ներկայացնելու առաջարկություն:

Կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի (այսուհետ նաև՝ **Կարգ**) 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից:

Կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտն անբավարար գնահատվելու դեպքում գնման ընթացակարգը «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Կարգի 12-րդ կետի համաձայն՝ հայտերն ներկայացնելու ժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն ավտոմատ ծանուցման միջոցով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը, ինչպես նաև նոր (վերանայված) գներ ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն:

Տվյալ դեպքում՝ «Դանինի», «Տումոե», «Զուգեպպե» և «Խաչմիք» ընկերությունները հայտեր են ներկայացրել Նախարարության կողմից հայտարարված էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգերի շրջանակներում: Ընդ որում, վերջիններիս գնային առաջարկները կազմել են 120 000 000, 240 000 000 կամ 360 000 000 ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ, նշված գնման ընթացակարգերին է մասնակցել նաև «Ֆուդսիթի» ընկերությունը՝ ներկայացնելով ապրանքների նախահաշվային կամ շուկայական գներին մոտ գնային առաջարկներ: Որոշ դեպքերում նման կերպ միևնույն ընթացակարգերին են մասնակցել նաև «Խաչմիք» և «Տումոե» ընկերությունները, որտեղ նախահաշվային կամ շուկայական գներին մոտ գնային առաջարկներ է ներկայացրել «Տումոե» ընկերությունը:

Այնուհետև, սակարկումների ընթացքում, մասնավորապես «Դանինի» և «Տումոե» ընկերությունները իրականացրել են էական սակարկումներ: Հատկանշական է, որ ընկերությունները Կարգի համաձայն հնարավորություն են ունեցել իրականացնել սակարկում վերջին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսի սահմաններում, սակայն իրականացնել են նվազեցումներ ավելի մեծ գումարների չափով: Ընդ որում, Ընկերությունները ներկայացրել են հրավերի պահանջներին անհամապատասխան հայտեր և շտկումներ չեն իրականացրել, ինչի արդյունքում վերջիններիս հայտերը մերժվել են: Այսպես, հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր ներկայացնելու արդյունքում ընկերությունները հայտնվել են Ցուցակում:

Ընդ որում, Ընկերությունների կողմից միտումնավոր կերպով գնման ընթացակարգերը խափանելու մասին է փաստում նաև այն, որ գնման ընթացակարգերին մասնակցելիս Ընկերությունները գտնվել են Ցուցակում, մինչդեռ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպես՝ «Դանինի» ընկերությունը Ցուցակում ներառվել է նաև 2021 թվականի նոյեմբերի 23-ին, 2021 դեկտեմբերի 29-ին, 2022 թվականի հունվարի 22-ին և փետրվարի 1-ին:

«Տումոե» ընկերությունը Ցուցակում ներառվել է նաև 2022 թվականի փետրվարի 1-ին, փետրվարի 16-ին, փետրվարի 23-ին, փետրվարի 24-ին և մարտի 1-ին:

«Ֆուդսիթի» ընկերությունը Ցուցակում ներառվել է նաև 2022 թվականի փետրվարի 23-ին, մարտի 2-ին, մարտի 4-ին, մարտի 16-ին, ապրիլի 12-ին, մայիսի 4-ին և հունիսի 10-ին:

«Ջուզեպպե» ընկերությունը Ցուցակում ներառվել է նաև 2022 թվականի մայիսի 31-ին, հունիսի 1-ին և հունիսի 11-ին:

«Խաչմիք» ընկերությունը Ցուցակում ներառվել է նաև 2022 թվականի ապրիլի 6-ին, ապրիլի 12-ին, ապրիլի 13-ին, ապրիլի 20-ին, ապրիլի 27-ին, մայիսի 4-ին, հունիսի 10-ին և հունիսի 14-ին:

Այսինքն՝ Ընկերությունները, հստակ իմանալով իրենց՝ Ցուցակում ներառված լինելու, ինչպես նաև այն հանգամանքի մասին, որ էլեկտրոնային աճուրդի ձևով գնումներ իրականացնելիս առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտն անբավարար գնահատվելու դեպքում գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, մասնակցել են գնման ընթացակարգերին՝ միտումնավոր խափանելով դրանք:

Ընկերությունների նման վարքագծի արդյունքում գնման ընթացակարգերի չափաբաժինների մի մասը չկայացած է հայտարարվել և Նախարարության կողմից տվյալ չափաբաժինների մասով գնման ընթացակարգերը վերահրապարակվել են: Վերոգրյալի արդյունքում, Ընկերությունները հնարավորություն են ստացել ծանոթանալ մրցակից ընկերությունների գների, ինչպես նաև սակարկումների ընթացքում վերջիններիս վարած գնային քաղաքականության հետ: Այսինքն՝ Ընկերությունները փաստացի հնարավորություն են ստացել կանխատեսելու հետագայում վերահրապարակվող ընթացակարգերի շրջանակներում մրցակիցներն ինչպիսի գնային առաջարկներ կարող են ներկայացնել, ինչպես նաև որքան գումարի չափով են պատրաստ իրականացնել սակարկումներ տարբեր ապրանքների մասով:

Նման պայմաններում, վերահրապարակվող ընթացակարգերի շրջանակներում «Ֆուդսիթի» ընկերությունը ստացել է ակնհայտ առավելություն և ընտրված մասնակից է ճանաչվել մի շարք չափաբաժինների մասով: Ընդ որում, այն դեպքերում, երբ այլ մասնակիցները շարունակել են սակարկումները և «Ֆուդսիթի» ընկերությունը պատրաստ

չի եղել նվազեցնել իր գնային առաջարկները, «Դանինի» և «Տումոե» ընկերությունները կրկին նվազեցրել են իրենց գնային առաջարկները: Հարկ է նշել, որ ընկերությունները մասնակցել են վերահրապարակված ընթացակարգերին արդեն իսկ Ցուցակում գնտվելով, ինչի արդյունքում վերջիններիս հայտերը կրկին մերժվել են և գնման ընթացակարգերը հայտարարվել են չկայացած:

Տվյալ դեպքում՝ Վարույթը հարուցվել է Ընկերությունների վարքագծում և գործողություններում հորիզոնական հակամրցակցային համաձայնության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով, ինչի համատեքստում պարզաբանման ենթակա են հետևյալ հարցադրումները.

*1. Արդյո՞ք Ընկերությունները միջև առկա է գնումների մասին օրենսդրության իմաստով փոխկապակցվածություն.*

*2. Արդյո՞ք Ընկերությունները դրսևորել են համաձայնեցված վարքագիծ:*

***Առաջին հարցադրման կապակցությամբ.***

Թիվ 526-Ն որոշման 119-րդ մասի 3-րդ կետից հետևում է, որ փոխկապակցված անձինք դիտարկվելու համար բավարար է ֆիզիկական անձի կարգավիճակ չունենալով գործել համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ Ընկերությունների միջև առկա փոխկապակցվածության հարցին:

Մասնավորապես՝ ֆիզիկական անձ Արտաշես Աբգարի Մկրտչյանը «Ֆուդսիթի» և «Զուգեպպե» ընկերությունների սեփականատերն է, ինչից հետևում է, որ ընկերությունները փոխկապակցված են:

Նախարարության կողմից 2021 թվականի հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-2» գնման ընթացակարգի շրջանակներում «Ֆուդսիթի» ընկերության տնօրեն Արտաշես Մկրտչյանը լիազորել է Աղասի Դանիելյանին (ով հանդիսանում է «Դանինի» ընկերության սեփականատերը) էլեկտրոնային եղանակով իր նույնականացման քարտով ստորագրել «Ֆուսդիթի» ընկերության փաստաթղթերը էլեկտրոնային գնումների բոլոր մրցույթների շրջանակներում:

«Տումոե» ընկերության տնօրեն Ջանիբեկ Թովմասյանը լիազորել է ֆիզիկական անձ Անդրանիկ Շավարշի Դանիելյանին (ով հանդիսանում է Աղասի Դանիելյանի եղբայրը) էլեկտրոնային եղանակով իր նույնականացման քարտով ստորագրել «Տումոե» ընկերության փաստաթղթերը էլեկտրոնային գնումների բոլոր մրցույթների շրջանակներում:

Ստացվում է՝ «Ֆուդսիթի» և «Տումոե» ընկերությունների կողմից էլեկտրոնային գնումների բոլոր մրցույթների շրջանակներում փաստաթղթերը ստորագրող լիազորված անձինք՝ Աղասի Դանիելյանը և Անդրանիկ Դանիելյանը, եղբայրներ են:

Հարկ է նաև նշել, որ Անդրանիկ Դանիելյանի կինը՝ Ելիզավետա Սարգսյանը հանդիսանում է «Տումոե» ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը:

Միևնույն ժամանակ, Աղասի Դանիելյանը հանդիսացել է «Տումոե» ընկերության սեփականատերը 2006-ից 2011 թվականներին և տնօրենը՝ 2005-ից 2011 թվականներին:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Արտաշես Մկրտչյանը և վերջինիս կինը՝ Լաուրա Վարդանյանը, տարբեր ժամանակահատվածներում աշխատել են կամ մինչ օրս աշխատում են «Դանինի», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» ընկերություններում, ինչպես նաև Աղասի Դանիելյանի և Անդրանիկ Դանիելյանի հետ փոխկապակցված այլ ընկերություններում:

Մասնավորապես՝ Արտաշես Մկրտչյանը աշխատել է «Դանինի» և «Մակրո Ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում և ներկա պահին աշխատում է «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» և «Հաղթանակ-2000» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններում, իսկ վերջինիս կինը՝ Լաուրա Վարդանյանը, աշխատում է «Դանինի», «Ֆուդսիթի» և «Խաչմիք» ընկերություններում:

Այսինքն, վերոգրյալ փաստերի համադրության հետևում է, որ ֆիզիկական անձինք Աղասի Դանիելյանը, Անդրանիկ Դանիելյանը և Արտաշես Մկրտչյանը փոխկապակցված են:

Բացի այդ, Նախարարության և այլ պատվիրատուների կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի շրջանակներում «Դանինի», «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» ընկերությունները հայտեր ներկայացնելով, հայտում նշել են նույն՝ 010 62 49 66 հեռախոսահամարը:

Մեկ այլ ընթացակարգի շրջանակներում «Դանինի» ընկերությունը սեփական հայտի փոխարեն կցել է «Ֆուդսիթի» ընկերության կողմից լրացված մասնակցության հայտ: Նմանատիպ օրինակներ են առկա նաև «Խաչմիք» ընկերության գործողություններում, որը Նախարարության կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի շրջանակներում սեփական հայտի փոխարեն կցել է «Տումոե» և «Ֆուդսիթի» ընկերությունների կողմից լրացված մասնակցության հայտեր:

Բացի այդ, Ֆինանսների նախարարության կողմից Ընկերությունների կողմից պետական գնումների շրջանակներում կատարված գործողությունների, մասնավորապես՝ հայտերի ներկայացման Այ-Փի հասցեների վերաբերյալ տրամադրված տեղեկատվության ուսումնասիրությունից ևս պարզ է դարձել, որ Ընկերությունները գործել են միևնույն՝

Այ-Փի հասցեից:

Ողջ վերոշարադրյալից ակնհայտ է, որ «Դանինի», «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե»» և «Խաչմիք» ընկերությունները փոխկապակցված անձինք են և միմյանց շահերը ապահովելու նպատակով ունեցել են համաձայնեցված գործելու հնարավորություն և, օգտվելով տվյալ հնարավորությունից, փաստացի գործել են համաձայնեցված՝ նպատակ ունենալով նախ էական մրցակցային առավելություններ ստանալու միջոցով ընտրված մասնակից ճանաչվելու, ապա նաև Ցուցակում գտնվելու պայմաններում գնման ընթացակարգերը միտումնավոր խափանելու հանգամանքը:

Այսպիսով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դանինի», «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե»» և «Խաչմիք» ընկերությունների միջև առկա է փոխկապակցվածություն:

***Երկրորդ հարցադրման կապակցությամբ.***

Սույն գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ընկերությունները մասնակցել են Նախարարության և այլ պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերին՝ վարելով համաձայնեցված քաղաքականություն:

Ընդ որում, Ընկերությունների կողմից գնման ընթացակարգերի շրջանակներում կատարված գործողություններն և վարքագիծը ունեցել են մի քանի դրսևորումներ, որոնց Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ:

***«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-1» ծածկագրերով գնման ընթացակարգերի մասով.***

***«Դանինի» և «Ֆուդսիթի» ըկերությունների կողմից դրսևորված վարքագծի և գործողությունների մասով:***

Նախարարության կողմից հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ի թիվս այլ ընկերությունների հայտ են ներկայացրել նաև «Դանինի» և «Ֆուդսիթի» ընկերությունները:

**Դրվագ 1.**

«Դանինի» ընկերությունը ներկայացրել է նախնական 120 000 000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկ: Մասնավորապես՝ ընկերությունը ներկայացրել է 120 000 000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկ 150 կգ ալյուրի, 250 կգ լոլիկի և պղպեղի, 8 կգ խաղողի պահածոյացված տերևի և նմանատիպ այլ ապրանքների համար:

Այնուհետև, ընկերությունը սակարկություններին չի մասնակցել և չի նվազեցրել իր նախնական գնային առաջարկը այն չափաբաժինների մասով, որոնց ընտրված մասնակից է ճանաչվել «Ֆուդսիթի» ընկերությունը:

Միևնույն ժամանակ, «Ֆուդսիթի» ընկերությունը, ինչպես և գնման ընթացակարգի մասնակից այլ ընկերությունները, վերոնշյալ ապրանքների համար ներկայացրել է իրատեսական գներ:

Այսինքն՝ վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ «Դանինի» ընկերությունը ներկայացրել է սննդամթերքի շուկայական գների համեմատ ոչ իրատեսական գներ՝ միտում չունենալով հետագայում իրականացնել որևէ սակարկում և գնման ընթացակարգի շրջանակում ապահովել է ձևական մասնակցություն:

Բացի այդ, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը «Դանինի» ընկերության կողմից «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ» գնման ընթացակարգի ոչ մի չափաբաժնի համար չի լրացվել, ինչպես նաև չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը: «Դանինի» ընկերությանը տրամադրվել է շտկման հնարավորություն, սակայն համապատասխան շտկումներ «Դանինի» ընկերության կողմից չեն կատարվել:

Արդյունքում՝ Նախարարության և «Ֆուդսիթի» ընկերության միջև 2022 թվականի փետրվարին կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-1» պայմանագիրը, որի գինը կազմել է 1 559 124 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար մեկ հարյուր քսանչորս) ՀՀ դրամ:

Այսինքն՝ գնման ընթացակարգի շրջանակում «Դանինի» ընկերությունը, գործելով «Ֆուդսիֆի» ընկերության օգտին, ներկայացրել է անհամապատասխան հայտ, ինչպես նաև անիրատեսական բարձր գնային առաջարկներ:

**Դրվագ 2**.

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Ֆուդսիֆի» ընկերությունը չափաբաժիններից մեծ մասի դեպքում չի իրականացրել սակարկում, իսկ «Դանինի» ընկերությունը մասնակցել է սակարկումներին՝ ներկայացնելով ցածր գնային առաջարկներ թե՛ մրցակիցների գնային առաջարկների, թե՛ չափաբաժինների նախահաշվային գների և թե՛ իր կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի համեմատ: Ընդ որում, նշված պատկերը բնորոշ է չափաբաժինների մեծամասնության դեպքում (տես՝ Աղյուսակ 1):

***Աղյուսակ 1***

| Չ/Հ | Գնման առարկա | Նախահաշվային գին | Մասնակից | Նախնական գնային առաջարկ | Վերջնական գնային առաջարկ |
|---|---|---|---|---|---|
| 58 | Հավի բուդ | 560 000 | ***«Ֆուդսիֆի» ՍՊԸ*** | ***533 748*** | ***480 000*** |
| | | | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***120 000 000*** | ***497 700*** |
| | | | «Պրովիզ» ՍՊԸ | 504 000 | 504 000 |
| | | | «Ղահրաման» ՍՊԸ | 699 999.60 | 699 999.60 |
| 81 | Տոմատի մածուկ | 96 000 | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***120 000 000*** | ***54 000*** |
| | | | «Սավա» ՍՊԸ | 86 400 | 82 560 |
| | | | ***«Ֆուդսիֆի» ՍՊԸ*** | ***83 400*** | ***83 400*** |
| | | | «Պրովիզ» ՍՊԸ | 115 200 | 115 200 |
| | | | «Ղահրաման» ՍՊԸ | 120 000 | 120 000 |

Ինչպես կարելի է տեսնել Աղյուսակ 1-ից, այն դեպքերում, երբ սակարկման ժամանակ «Ֆուդսիֆի» ընկերությունը ներկայացնում է իր համար հնարավոր նվազագույն գնային առաջարկ և այնուհետև մեկ այլ մասնակից ևս սակարկում է իրականացնում, «Դանինի» ընկերությունը ներկայացնում է անհամեմատ ցածր գնային առաջարկ (տես՝ Աղյուսակ 2): Նմանատիպ պատկեր առկա է 81-րդ չափաբաժնի դեպքում:

Ընդ որում, 81-րդ չափաբաժնի դեպքում Կարգի դրույթների համաձայն՝ «Դանինի» ընկերությունը կարող էր իրականացնել նվազեցում «Սավա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից առաջարկած 82 560 ՀՀ դրամի մեկ տոկոսի չափով՝ ներկայացնելով շուրջ 81 730 ՀՀ դրամի չափով գնային առաջարկ: Փոխարենը՝ «Դանինի» ընկերությունը ներկայացրել է 54 000 ՀՀ դրամի չափով, ինչի արդյունքում ընթացակարգը նշված չափաբաժնի մասով չկայացած է հայտարարվել:

Այսինքն՝ «Դանինի» ընկերությունը հնարավորություն է ունեցել սակարկումներ իրականացնելով ճանաչվել ընտրված մասնակից, սակայն ձեռնպահ է մնացել ընտրված մասնակից ճանաչվելուն ուղղված քայլեր իրականացնելուց: Ավելին՝ ընկերությունը միտումնավոր կերպով ներկայացրել է հրավերի պահանջներին անհապատասխան հայտեր, ինը ևս մեկ անգամ վկայում է, որ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու միտում չի ունեցել:

**Դրվագ 3.**

Միևնույն ժամանակ, 58-րդ չափաբաժնի դեպքում, տեսնելով, որ որևէ այլ մասնակից սակարկում չի իրականացնում, «Ֆուդսիթի» ընկերությունը իրականացրել է սակարկման մեկ քայլ և ճանաչվել ընտրված մասնակից:

***Աղյուսակ 2***

| *Չ/Հ* | *Գնման առարկա* | *Մասնակից* | *Սակարկումներ /առանց ԱԱՀ/* |
|---|---|---|---|
| 58 | Հավի բուդ | «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ | 414 750 |
| | | «Ֆուդսիթի» ՍՊԸ | 400 000 |
| 81 | Տոմատի մածուկ | «Սավա» ՍՊԸ | 68 800 |
| | | «Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ | 45 000 |

Այսինքն՝ տվյալ պարագայում ևս «Դանինի» ընկերությունը հնարավորություն է ունեցել սակարկումներ իրականացնելով ճանաչվել ընտրված մասնակից, սակայն գործել է «Ֆուդսիթի» ընկերության օգտին և ընտրված մասնակից ճանաչվելուն ուղղված որևէ քայլ չի ձեռնարկել:

***«Տումոե» և «Ֆուդսիթի» ըկերությունների կողմից դրսևորված վարքագծի և գործողությունների մասով:***

Նախարարության կողմից «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ» ծածակագրով գնման ընթացակարգը 2021 թվականի դեկտեմբերի 5-ին վերահայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-1» ծածկագրով, որի շրջանակներում, ի թիվս այլ ընկերությունների, հայտ են ներկայացրել նաև «Տումոե» և «Ֆուդսիթի» ընկերությունները:

**Դրվագ 1.**

Ինչպես «Դանինի» ընկերության դեպքում, «Տումոե» ընկերությունը ևս ներկայացրել է հրավերի պահանջներին անհամապատասխան հայտ: Մասնավորապես՝ «Տումոե» ընկերության կողմից չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ հայտարարարագիրը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը լրացվել է նշանների տեսքով, թիվ 1 հավելվածում «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-1» ծածկագրի փոխարեն լրացվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-2» ծածկագիրը, «Տումոե» ընկերության գործունեության հասցեն չի լրացվել, հասանելի հեռախոսահամար չի նշվել (նշվել է ոչ հայկական հեռախոսակապի օպերատորի անհասանելի հեռախոսահամար՝ «+44 7412500203»), ընկերության ռուսերեն լեզվով անվանումը նշվել է «Տումոե ՍՊԸ»: Հարկ է նշել, որ բոլոր չափաբաժինների համար թիվ 1 հավելվածը լրացվել է նույնանման

ձևով: «Տումոե» ընկերությանը տրամադրվել է շտկման հնարավորություն, սակայն համապատասխան շտկումներ «Տումոե» ընկերության կողմից չեն կատարվել:

«Տումոե» ընկերությունը ներկայացրել է նախնական 360 000 000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկ: Մասնավորապես՝ ընկերությունը ներկայացրել է 360 000 000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկ 700 կգ սոխի, 60 ցորենաձավարի, 2 կգ կականոյի և նմանատիպ այլ ապրանքների համար:

Այնուհետև, ընկերությունը սակարկություններին չի մասնակցել և չի նվազեցրել իր նախնական գնային առաջարկը այն չափաբաժինների մասով, որոնց ընտրված մասնակից է ճանաչվել «Ֆուդսիթի» ընկերությունը:

Միևնույն ժամանակ, «Ֆուդսիթի» ընկերությունը, ինչպես և գնման ընթացակարգի մասնակից այլ ընկերություններ, վերոնշյալ ապրանքների համար ներկայացրել է իրատեսական գներ:

Այսինքն՝ տվյալ դեպքում ևս կարելի է եզրահանգել, որ «Տումոե» ընկերությունը ներկայացրել է սննդամթերքի շուկայական գներից ոչ իրատեսական բարձր գներ՝ միտում չունենալով հետագայում իրականացնել որևէ սակարկում և գնման ընթացակարգի շրջանակում ապահովել է ձևական մասնակցություն:

Արդյունքում՝ Նախարարության և «Ֆուդսիթի» ընկերության միջև 2022 թվականի փետրվարին կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-1-1» պայմանագիրը, որի գինը կազմել է 5 896 508 (հինգ միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար հինգ հարյուր ութ) ՀՀ դրամ:

Այսինքն՝ գնման ընթացակարգի շրջանակում «Տումոե» ընկերությունը, գործելով «Ֆուդսիթի» ընկերության օգտին, ներկայացրել է անհամապատասխան հայտ, ինչպես նաև անիրատեսական բարձր գնային առաջարկներ:

**Դրվագ 2.**

Վերահրապարակված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ է ներկայացրել «Տումոե» ընկերությունը և խափանել է գնման ընթացակարգը: Ընկերությունը ներկայացրել է անհամեմատ բարձր նախնական գնային առաջարկ, այնուհետև իրականացրել է սակարկում՝ ներկայացնելով ցածր գնային առաջարկներ թե՛ մրցակիցների գնային առաջարկների, թե՛ չափաբաժինների նախահաշվային գների և թե՛ իր կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի համեմատ (տես՝ Աղյուսակ 3): Այսինքն՝ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկները համադրելի չեն ապրանքների շուկայական գների հետ, ավելին՝ տրամաբանական և որևէ կերպ հիմնավորված չեն:

Ավելին՝ «Տումոե» ընկերության կողմից նախնական 360 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկ ներկայացնելը և այնուհետև այն սակարկելը մինչև 100-ից 2000 ՀՀ դրամ վկայում է այն մասին, որ ընկերությունը ակնհայտ միտում է ունեցել խափանել պետական կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգը:

Այսինքն՝ «Տումոե» ընկերությունը հնարավորություն է ունեցել սակարկումներ իրականացնելով ճանաչվել ընտրված մասնակից, սակայն փոխարենը՝ միտումնավոր կերպով ներկայացրել է այնպիսի գնային առաջարկներ, որոնց արդյունքում խափանվել է գնման ընթացակարգը:

***Աղյուսակ 3***

| Չափաբաժնի համար | Չափաբաժնի անվանումը | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Գնային առաջարկ (դրամ) | քանակ (հատ, կգ) | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|
| 7 | Սխտոր | 1 | Տումոե ՍՊԸ | 600 | 5 | Մերժված |
| 13 | Բանան | 1 | Տումոե ՍՊԸ | 840 | 600 | Մերժված |
| 20 | Խուրմա | 1 | Տումոե ՍՊԸ | 1 800 | 100 | Մերժված |
| 22 | Շոկոլադ | 1 | Տումոե ՍՊԸ | 1 560 | 300 | Մերժված |
| 23 | Կարամել 1 | 1 | Տումոե ՍՊԸ | 1 080 | 300 | Մերժված |
| 29 | Ջեմ 2 | 1 | Տումոե ՍՊԸ | 1 080 | 30 | Մերժված |
| 36 | Պրյանիկ | 1 | Տումոե ՍՊԸ | 1 920 | 200 | Մերժված |
| 38 | Հավի միս | 1 | Տումոե ՍՊԸ | 2 160 | 350 | Մերժված |
| 39 | Ձուկ սառեցված | 1 | Տումոե ՍՊԸ | 1 800 | 300 | Մերժված |
| 41 | Կաթնաշոռ 1 | 1 | Տումոե ՍՊԸ | 2 400 | 600 | Մերժված |
| 42 | Թթվասեր | 1 | Տումոե ՍՊԸ | 2 280 | 500 | Մերժված |
| 49 | Ձու | 1 | Տումոե ՍՊԸ | 91.2 | 10 000 | Մերժված |
| 50 | Աղ կերակրի | 1 | Տումոե ՍՊԸ | 120 | 300 | Մերժված |
| 51 | Թեյ | 1 | Տումոե ՍՊԸ | 120 | 6 | Մերժված |

**Դրվագ 3.**

Միևնույն ժամանակ, այն չափաբաժինների դեպքում, երբ «Փուդսիթի» ընկերությանը հաջողվել է ընտրված մասնակից ճանաչվել, «Տումոե» ընկերությունը քայլ չի ձեռնարկել: Օրինակ՝ 3-րդ չափաբաժնի դեպքում «Փուդսիթի» ընկերության ներկայացրած նախնական գնային առաջարկից հետո որևէ ընկերություն սակարկում չի իրականացրել, ուստի «Տումոե» ընկերությունը ևս իր հայտը թողել է անփոփոխ (տես՝ Աղյուսակ 4):

Ստացվում է՝ «Տումոե» ընկերությունը օրինակ 7-րդ չափաբաժնի դեպքում պատրաստ է եղել նվազեցնել իր գնային առաջարկը 359 999 400 ՀՀ դրամով, սակայն մեկ այլ չափաբաժնի դեպքում ձեռնպահ է մնացել նվազեցնել իր գնային առաջարկը վերջին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսի չափով:

Այսինքն՝ տվյալ պարագայում ևս «Տումոե» ընկերությունը հնարավորություն է ունեցել սակարկումներ իրականացնելով ճանաչվել ընտրված մասնակից, սակայն գործել է, «Փուդսիթի» ընկերության օգտին և ընտրված մասնակից ճանաչվելուն ուղղված որևէ քայլ չի ձեռնարկել:

***Աղյուսակ 4***

| Հ/Հ | Գնման առարկա | Նախահաշվային գին | Մասնակից | Նախնական գնային առաջարկ | Վերջնական գնային առաջարկ |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ***3*** | Լոլիկ | - | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***67 500*** | ***66 720*** |
| | | | «Գնումների աջակցման խորհրդատվական կենտրոն» ՍՊԸ | 87 000 | 87 000 |
| | | | «Ֆոտոն» ՍՊԸ | 112 500 | 112 500 |
| | | | «Ղահրաման» ՍՊԸ | 249 999.6 | 249 999.6 |
| | | | «Բնական բարիքներ» ՍՊԸ | 250 000 | 250 000 |
| | | | ***«Տումոե» ՍՊԸ*** | ***360 000 000*** | ***360 000 000*** |

***«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-2» ծածկագրերով գնման ընթացակարգերի մասով.***

***«Դանինի» և «Ֆուդսիթի» ընկերությունների կողմից դրսևորված վարքագծի և գործողությունների մասով:***

Նախարարությունը 2021 թվականի նոյեմբերի 15-ին իր ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2022 թվականի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգը, որի շրջանակներում հայտ են ներկայացրել նաև «Դանինի» և «Ֆուդսիթի» ընկերությունները:

**Դրվագ 1.**

«Դանինի» ընկերությունը «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ևս ներկայացրել է իրավերի պայմաններին անհամապատասխան հայտ:

Բացի այդ, «Դանինի» ընկերության նախնական գնային առաջարկը տվյալ դեպքում ևս բոլոր չափաբաժինների համար կազմել է 240 000 000 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ հայտարարված չափաբաժինների շրջանակներում առավելագույն նախահաշվային գինը կազմել է շուրջ 17 000 000 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ, «Ֆուդսիթի» ընկերությունը ներկայացրել է մրցակցային գնային առաջարկներ:

Ընթացակարգի շրջանակներում «Ֆուդսիթի» ընկերությունը 6 չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչի արդյունքում՝ Նախարարության և «Ֆուդսիթի» ընկերության միջև 2022 թվականի փետրվարին կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-1» պայմանագիրը, որի գինը կազմել է 23 656 323 (քսաներեք միլիոն վեց հարյուր հիսունվեց հազար երեք հարյուր քսաներեք) ՀՀ դրամ:

Այսինքն՝ նշված գնման ընթացակարգերի շրջանակում ևս «Դանինի» ընկերությունը, գործելով «Ֆուդսիթի» ընկերության օգտին, ներկայացրել է անհամապատասխան հայտ, ինչպես նաև անիրատեսական բարձր գնային առաջարկներ:

**Դրվագ 2.**

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ևս «Ֆուդսիթի» ընկերությունը չափաբաժիններից մեծ մասի դեպքում չի իրականացրել սակարկում, իսկ «Դանինի» ընկերությունը մասնակցել է սակարկումներին՝ ներկայացնելով ցածր գնային առաջարկներ թե՛ մրցակիցների գնային առաջարկների, թե՛ չափաբաժինների նախահաշվային գների և թե՛ իր կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի համեմատ (տես՝ Աղյուսակ 5):

***Աղյուսակ 5***

| *Չ/Հ* | *Գնման առարկա* | *Նախահաշվային գին* | *Մասնակից* | *Նախնական գնային առաջարկ* | *Վերջնական գնային առաջարկ* |
|---|---|---|---|---|---|
| ***2*** | Բարձր տեսակի ցորենի ալյուր | 9 179 300 | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***240 000 000*** | ***7 999 999.2*** |
| | | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 17 959 500 | 11 733 540 |
| | | | «Բնական Բարիքներ ՍՊԸ | 11 973 000 | 11 973 000 |
| | | | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***13 369 854*** | ***13 3698 54*** |
| | | | «Ցիկլոիդ» ՍՊԸ | 17 959 500 | 17 959 500 |
| | | | «Ղահրաման» ՍՊԸ | 17 959 500 | 17 959 500 |
| | | | «Նորք-7» ՍՊԸ | 199 550 00.4 | 199 550 00.4 |
| | | | «Պրովիզ» ՍՊԸ | 20 114 640 | 20 114 640 |
| ***52*** | Մրգահյութ | 16 989 000 | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***240 000 000*** | ***11 999 998.8*** |
| | | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 24 270 000 | 14 040 000 |
| | | | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***17 191 260*** | ***15 000 000*** |
| | | | «Ցիկլոիդ» ՍՊԸ | 20 225 000.4 | 17 019 336 |
| | | | «Ղահրաման» ՍՊԸ | 19 820 499.6 | 19 820 499.6 |
| | | | «Ֆոտոն» ՍՊԸ | 22 247 499.6 | 22 247 499.6 |
| | | | «Պրովիզ» ՍՊԸ | 24 270 000 | 24 270 000 |
| | | | «Նորք-7» ՍՊԸ | 28 315 000.8 | 28 315 000.8 |
| | | | «Բնական Բարիքներ ՍՊԸ | 30 337 500 | 30 337 500 |
| ***98*** | Կարագ | 19 687 200 | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***20 444 400*** | ***18 142 512*** |
| | | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 34 074 000 | 18 346 956 |
| | | | «Պրովիզ» ՍՊԸ | 24 960 000 | 24 960 000 |
| | | | «Ղահրաման» ՍՊԸ | 28 773 600 | 28 773 600 |
| | | | «Ցիկլոիդ» ՍՊԸ | 30 288 000 | 30 288 000 |
| | | | «Նորք-7» ՍՊԸ | 30 288 000 | 30 288 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Բնական Բարիքներ ՍՊԸ | 30 288 000 | 30 288 000 |
| | | | «Խաք» ՍՊԸ | 30 288 000 | 30 288 000 |
| | | | «Ֆոտոն» ՍՊԸ | 31 802 400 | 31 802 400 |
| | | | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***240 000 000*** | ***240 000 000*** |
| ***133*** | Հաճարած ավար | 361 210 | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***240 000 000*** | ***150 000*** |
| | | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 792 900 | 392 485.20 |
| | | | «Ֆոտոն» ՍՊԸ | 396 450 | 396 450 |
| | | | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***475 740*** | ***475 740*** |
| | | | «Բնական Բարիքներ ՍՊԸ | 528 600 | 528 600 |

Այսինքն՝ Աղյուսակ 5-ից պարզ է դառնում, որ «Դանինի» ընկերությունը չի իրականացրել սակարկումներ 98-րդ չափաբաժնի մասով, որտեղ «Ֆուդսիթի» ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից առաջին փորձից, մինչդեռ հնարավություն ուներ իրականացնել սակարկում «Ֆուդսիթի» ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի առնվազն մեկ տոկոսի չափով և ճանաչվել ընտրված մասնակից:

**Դրվագ 3.**

Միևնույն ժամանակ, այն դեպքերում, երբ մրցակիցը սակարկման ընթացքում ներկայացրել է այնպիսի գին, որը ցածր է «Ֆուդսիթի» ընկերության կողմից ներկայացված նախնական գնային առաջարկից, «Դանինի» ընկերությունը անհամեմատ ցածր գին է ներկայացրել: Արդյունքում՝ «Դանինի» ընկերությունը խոչընդոտել է այլ մասնակիցներին սակարկումները շարունակել և ճանաչվել է ընտրված մասնակից: Նման պատկեր առկա է օրինակ 2-րդ և 133-րդ չափաբաժինների դեպքում:

Ստացվում է՝ «Դանինի» ընկերությունը 7-րդ չափաբաժնի դեպքում պատրաստ է եղել իր նախնական 240 000 000 ՀՀ դրամի չափով նվազեցնել 232 000 000 ՀՀ դրամով, իսկ 98-րդ չափաբաժնի դեպքում ձեռնպահ է մնացել նվազեցնել իր գնային առաջարկը վերջին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսի չափով՝ դարձնելով այն 17 961 086 ՀՀ դրամ:

Բացի այդ, այն դեպքերում, երբ սակարկման ժամանակ «Ֆուդսիթի» ընկերությունը ներկայացրել է իր համար հնարավոր նվազագույն գնային առաջարկը և այնուհետև մեկ այլ մասնակից ևս սակարկում է իրականացրել, «Դանինի» ընկերությունը կրկին ներկայացրել է անհամեմատ ցածր գնային առաջարկ (տես՝ Աղյուսակ 6):

***Աղյուսակ 6***

| ***Հ/Հ*** | ***Գնման առարկա*** | ***Մասնակից*** | ***Սակարկումներ /առանց ԱԱՀ/*** |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| **2** | Բարձր տեսակի ցորենի ալյուր | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***9 877 725*** |
| | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 9 777 950 |
| | | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***6 666 666*** |
| ***52*** | Մրգահյութ | «Ցիկլոիդ» ՍՊԸ | 14 182 780 |
| | | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***13 000 000*** |
| | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 12 856 739 |
| | | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | 12 500 000 |
| | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 12 000 000 |
| | | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | 11 856 739 |
| | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 11 700 000 |
| | | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***9 999 999*** |
| ***98*** | Կարագ | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 16 866 630 |
| | | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***16 696 260*** |
| | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 16 525 890 |
| | | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***15 459 500*** |
| | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 15 289 130 |
| | | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***15 118 760*** |
| ***133*** | Հնդկաձավար | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 327 071 |
| | | ***«Դանինի» ՍՊԸ-ի հայաստանյան մ/ճ*** | ***150 000*** |

Նախարարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 4-ին ընթացակարգը վերահայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-2» ծածկագրով: Նոր ընթացակարգը բաղկացած է եղել 77 չափաբաժիններից: «Դանինի» ընկերությունը տվյալ ընթացակարգին չի մասնակցել:

***«Տումոե» և «Ֆուդսիթի» ընկերությունների կողմից դրսևորված վարքագծի և գործողությունների մասով:***

**Դրվագ 1.**

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Տումոե» ընկերությունը և 77 չափաբաժիններից 65 չափաբաժնի մասով զբաղեցրել է առաջին տեղը: «Տումոե» ընկերությունը ներկայացրել է հրավերի պահանջներին անհամապատասխան հայտ: «Տումոե» ընկերությանը տրամադրվել է շտկման հնարավորություն, սակայն համապատասխան շտկումներ ընկերության կողմից չեն իրականացվել: Արդյունքում՝ ընկերության հայտը մերժվել է, իսկ ընթացակարգը 65 չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած:

Ընթացակարգին մասնակցելիս «Տումոե» ընկերությունը ներառված է եղել Ցուցակում: Ընկերությունը բոլոր չափաբաժինների մասով ներկայացրել է 360 000 000 ՀՀ դրամի չափով նախնական գնային առաջարկ:

«Տումոե» ընկերությունը «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում 65 չափաբաժնի մասով ներկայացրել է ոչ իրատեսական գներ: Օրինակ՝ 39 910 կգ ալյուրի համար ընկերությունը ներկայացրել է 228 ՀՀ դրամի չափով գնային առաջարկ, 12 181 կգ տավարի մսի համար՝ 3 600 ՀՀ դրամ չափով գնային առաջարկ և այլն: Նման պայմաններում ընկերությունը աճուրդի ամփոփման արդյունքում ճանաչվել է ընտրված մասնակից և այնուհետև վերջինիս հայտը մերժվել է:

Այսինքն՝ «Տումոե» ընկերությունը, իմանալով, որ գտնվում է Ցուցակում, միտումնավոր կերպով մասնակցել է գնման ընթացակարգին և խափանել է ընթացակարգը այն չափաբաժինների մասով, որոնց շրջանակներում «Ֆուդսիթի» ընկերությունը հնարավորություն չի ունեցել ճանաչվել ընտրված մասնակից:

Վերահրապարակված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Տումոե» ընկերությունը կրկին բոլոր չափաբաժինների համար ներկայացրել է 360 000 000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկ և իրականացրել է սակարկումներ միայն այն դեպքերում, երբ «Ֆուդսիթի» ընկերությանը չի հաջողվել ճանաչվել ընտրված մասնակից (տես՝ Աղյուսակ 7):

*Աղյուսակ 7*

| Չ/Հ | Գնման առարկա | Մասնակից | Նախնական գնային առաջարկ | Վերջնական գնային առաջարկ |
|---|---|---|---|---|
| *1* | Բարձր տեսակի ցորենի ալյուր | ***«Տումոե» ՍՊԸ*** | ***360 000 000*** | ***228*** |
| | | «Ցիկլոիդ» ՍՊԸ | 11 973 000 | 11 973 000 |
| | | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***12 372 096*** | ***12 372 096*** |
| | | «Բնական Բարիքներ ՍՊԸ | 13 968 500 | 13 968 500 |
| | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 15 564 900 | 15 564 900 |
| | | «Նորք-7» ՍՊԸ | 15 964 000.8 | 15 964 000.8 |
| | | «Ղահրաման» ՍՊԸ | 17 959 500 | 17 959 500 |
| *73* | Հաճարաձավար | ***«Ֆուդսիթի» ՍՊԸ*** | ***431 690.4*** | ***392 400*** |
| | | «Ֆոտոն» ՍՊԸ | 396 450 | 396 450 |
| | | «Ցիկլոիդ» ՍՊԸ | 422 880 | 422 880 |
| | | «Նորք-7» ՍՊԸ | 616 704 | 616 704 |
| | | «Նոբիլիս Գրուպ» ՍՊԸ | 792 900 | 792 900 |
| | | «Ղահրաման» ՍՊԸ | 880 999.2 | 880 999.2 |
| | | ***«Տումոե» ՍՊԸ*** | ***360 000 000*** | ***360 000 000*** |

Բացի այդ, նշված, ինչպես նաև այլ գնման ընթացակարգի սակարկումների արդյունքերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ նվազել է սակարկում իրականացնող մասնակիցների քանակը (տես՝ Աղյուսակ 8): Այսինքն, եթե մինչ գնման ընթացակարգերի վերահրապարակումները սակարկումներին մասնակցում էին նվազագույնը 2-ից 3 ընկերություն, վերահրապարակումներից հետո ընկերությունների դրսևորած վարքագծի և գործողությունների արդյունքում հնարավոր այլ մասնակիցները սակարկումներ չեն իրականացրել:

***Աղյուսակ 8***

| ***Հ/Հ*** | ***Գնման առարկա*** | ***Մասնակից*** | ***Սակարկումներ /առանց ԱԱՀ/*** |
|---|---|---|---|
| **1** | Բարձր տեսակի ցորենի ալյուր | ***«Տումոե» ՍՊԸ-*** | ***190*** |
| **73** | Մրգահյութ | **«Ֆուդսիթի» ՍՊԸ** | **327 000** |

Ընդ որում՝ «Դանինի», «Տումոե» և «Ֆուդիսթի» ընկերությունների կողմից դրսևորած վարքագիծը և գործողությունները առկա են ոչ միայն վերոշարադրյալ գնման ընթացակարգերի և վերջիններիս վերահրապարակումների դեպքերում, այլ նաև «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-1», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-2», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-ԵԽ», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-ԵԽ-1», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-Վ» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-Վ-1» ծածկագրերով գնման ընթացակարգերի և դրանց վերահրապարակումների դեպքերում:

Որոշ գնման ընթացակարգերի շրջանակներում հայտ է ներկայացրել նաև «Խաչմիք» ընկերությունը, որը մասնակցելիս հայտ է ներկայացրել «Ֆուդսիթի» և «Տումոե» ընկերությունների անունից, սակայն սակարկումների ժամանակ որևէ քայլ չի ձեռնարկել:

Ընկերությունների վերոշարադրյալ վարքագծի վերլուծությունից պարզ է դառնում, որ Նախարարության կողմից հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում «Դանինի» և «Տումոե» ընկերությունները, ստեղծել են այնպիսի պայմաններ, որոնք այլ մասնակիցների կողմից սակարկումները շարունակելը դարձրել են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու տեսանկյունից ակնհայտորեն ոչ շահավետ՝ այդպիսով օբյեկտիվորեն անհնար դարձնելով այլ մասնակիցների՝ ընտրված մասնակից ճանաչվելը:

«Դանինի» և «Տումոե» ընկերությունները մասնակցել են գնման ընթացակարգերին և վերջիններիս վարքագծի արդյունքում գնման ընթացակարգերի նախահաշվային գներից և մրցակիցների գներից էականորեն տարբերվող գնային առաջարկներ կամ գնման ընթացակարգերի հրավերների պահանջներին անհամապատասխան հայտեր ներկայացնելով, խոչընդոտել են գնման ընթացակարգերի կայացմանը այն չափաբաժինների մասով, որոնց շրջանակներում «Ֆուդսիթի» ընկերությունը

հնարավորություն չի ունեցել նախնական առաջարկից առավել ցածր գնային առաջարկ ներկայացնել:

Արդյունքում՝ «Ֆուդսիթի» ընկերությունը ձեռք է բերել մրցակցային առավելություն՝ էլեկտրոնային աճուրդների ավարտին ծանոթանալով մրցակիցների գնային առաջարկներին և փաստացի մինչև գնման ընթացակարգերի վերահրապարակումը նախապես տեղյակ լինելով մրցակիցների գնային քաղաքականությունից:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովն ուսումնասիրել է այլ պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում Ընկերությունների վարքագիծն և գործողությունները, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ Ընկերությունները այլ պատվիրատուների կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի դեպքում ևս դրսևորել են նույնանպատակ վարքագիծ:

Այսպես օրինակ՝ Երևանի քաղաքապետարանի կողմից 2022 թվականի հունվարի 21-ին հայտարարվել է 1 չափաբաժնից բաղկացած «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/42» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Տումոե» և «Խաչմիք» ընկերությունները: Ընթացակարգի շրջանակներում «Տումոե» և «Խաչմիք» ընկերությունները անհամեմատ ցածր նախահաշվային գների դեպքում ներկայացրել են համապատասխանաբար 29 330 400 և 36 000 000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկներ: Սակարկումներին մասնակցել է միայն «Խաչմիք» ընկերությունը և վերջինիս հաջողվել է ընտրված մասնակից ճանաչվել, ուստի նախորդ ընթացակարգերի տրամաբանությունից ելնելով սակարկությունների ընթացքում «Տումոե» ընկերությունը որևէ քայլ չի ձեռնարկել: Արդյունքում «Խաչմիք» ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից 2022 թվականի հունվարի 19-ին հայտարարվել է 13 չափաբաժնից բաղկացած «ՀՀ ՀԿԿ–ԷԱՃԱՊՁԲ–ԳՈՒՅՔ-2022/06» ծածկագրով գնման ընթացակարգը, որին հայտ են ներկայացրել «Տումոե» և «Խաչմիք» ընկերությունները: Ընթացակարգի շրջանակներում «Տումոե» և «Խաչմիք» ընկերությունները անհամեմատ ցածր նախահաշվային գների դեպքում ներկայացրել են համապատասխանաբար 180 000 000 և 360 000 000 ՀՀ դրամի չափով գնային առաջարկներ:

Վերոգրյալի համատեքստում կարելի է փաստել, որ Ընկերությունները այլ պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում ևս դրսևորել են նույնանման վարքագիծ:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ «Ֆուդսիթի» ընկերության Ցուցակում հայտնվելուց հետո նույն սեփականատիրոջ կողմից հիմնվել է «Զուգեպպե» ընկերությունը, որը ևս մասնակցել է պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերի և խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում նույնպես հայտնվել է Ցուցակում:

Բացի այդ, «Զուգեպպե» և «Խաչմիք» ընկերության հայտերում լրացված է նույն բջջային հեռախոսահամարը՝ 055 75 54 55:

«Զուգեպպե» ընկերությունը իր հերթին մասնակցել է տարբեր պատվիրատուների կողմից հայտարարված գնման ընթացակարգերի՝ նախահաշվային գների ներկայացնելով

անհամեմատ բարձր գնային առաջարկներ, նույն սկզբունքով ինչպես «Դանինի», «Տումոե» և «Խաչմիք» ընկերությունները:

Վերոգրյալից հետևում է, որ Ընկերությունները էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգերի շրջանակներում ելնելով ընդհանուր տնտեսական շահից և պայմանավորվածություններ ձեռք բերելով միտումնավոր խափանել են բազմաթիվ գնման ընթացակարգեր, որպեսզի հնարավորություն ունենան առավել բարենպաստ պայմաններով և առավել մեծ քանակով չափաբաժինների մասով ճանաչվել ընտրված մասնակից և պայմանագիր կնքել պատվիրատուի հետ:

Միևնույն ժամանակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ անձի համար բարենպաստ հանգամանքների, ինչպես նաև անբարենպաստ հանգամանքների առկայությունը հերքող հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է անձը: Ընդ որում, անձի համար անբարենպաստ հանգամանքների առկայությունը հերքող հանգամանքների պարտականությունը կրում է միայն այն դեպքում, երբ դրանց մասին վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով:

Տվյալ դեպքում՝ Ընկերությունները չեն ներկայացրել գնման ընթացակարգերի տարբեր չափաբաժինների շրջանակներում նման գնային քաղաքականության հիմքում ընկած օբյեկտիվ հիմնավորումներ կամ այն պայմանավորող տնտեսական գործոններ:

Այսինքն՝ քննարկվող ժամանակահատվածում Ընկերությունների կողմից Նախարարության և այլ պետական մարմինների կողմից հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում վարած քաղաքականությունը պայմանավորված չէր կարող լինել այնպիսի տնտեսական գործոններով, որոնք կարող էին ազդել ապրանքների գնագոյացման վրա: Ավելին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրինակ

Նախարարության կողմից հայտարարված գնման ընթացակարգերի շրջանակներում նույնանման պայմաններում վերջիններիս վարած գնային քաղաքականությունը յուրաքանչյուր չափաբաժնի մասով համանման չի եղել՝ կարելի է փաստել, որ ընկերությունները գնման ընթացակարգերին մասնակցելիս գործել են համաձայնեցված, այդ թվում՝ պլանավորելով և վարելով համաձայնեցված քաղաքականություն:

Այսպիսով, փոխկապակցված «Դանինի», «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե»» և «Խաչմիք» ընկերությունների կողմից միաժամանակ միևնույն գնման ընթացակարգերին մասնակցելու, նշված ընթացակարգերի շրջանակներում անիրատեսական բարձր գնային առաջարկներ ներկայացնելու, սակարկությունների ընթացքում կոնկրետ չափաբաժինների մասով չհիմնավորված նվազեցումներ կատարելու, միաժամանակ մյուս չափաբաժինների մասով ոչ իրատեսական բարձր գներից նվազեցումներ իրականացնելուց ձեռնպահ մնալու՝ այդպիսով ընտրված մասնակից ճանաչվելուց խուսափելու, գնման ընթացակարգերը միտումնավոր խափանելու գործողությունների ու վարքագծի դրսևորմամբ պետական գնումների արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունը պարունակում է հորիզոնական հակամրցակցային համաձայնության կնքմամբ Օրենքի խախտման հատկանիշներ:

***<u>3) Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին»

թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 12-րդ կետի համաձայն' տուգանքը հաշվարկվում է հետևյալ փուլերով.

1) որոշվում է տուգանքի բազային գումարը.

2) գնահատվում են վարույթի ընթացքում հաստատված ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, և հիմքերի առկայության դեպքում բազային գումարը ենթարկվում է համապատասխան փոփոխությունների.

3) Մեթոդաբանությամբ նախատեսված դեպքերում համապատասխանեցվում է պատասխանատվության միջոցը:

Մեթոդաբանության 13-րդ կետի համաձայն' Հանձնաժողովը տուգանքը հաշվարկում է Տ = Բ + Բ\(Ծ-Մ) բանաձևով, որտեղ' Տ-ն տուգանքի չափն է, Բ-ն տուգանքի բազային գումարն է, Ծ-ն բոլոր ծանրացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է, Մ-ն բոլոր մեղմացնող հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարն է:

***<u>Բազային գումարի հաշվարկը</u>***.

Մեթոդաբանության 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն' հորիզոնական հակամրցակցային համաձայնության կնքումը ըստ բնույթի մրցակցային իրավախախտում է:

Մեթոդաբանության 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նախազգուշացում չի կարող տրվել հորիզոնական հակամրցակցային համաձայնության կնքման (կայացման), այդ համաձայնությանը մասնակցության դեպքում:

Մեթոդաբանության 14-րդ կետի համաձայն' մրցակցային իրավախախտումների դեպքում տուգանքի բազային գումարը որոշվում է ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարի, իրավախախտման համապատասխան ծանրության խմբի համար սահմանված տոկոսի և իրավախախտման տևողության արտադրյալի հաշվարկման միջոցով՝ Բ = Հ x Խ x Ժ բանաձևով, որտեղ' Բ-ն տուգանքի բազային գումարն է մրցակցային իրավախախտումների դեպքում, Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթի գումարն է, Խ-ն իրավախախտման համապատասխան ծանրության խումբն է, Ժ-ն իրավախախտման տևողությունն է:

*Ապրանքի իրացումից ստացված հասույթ.*

Մեթոդաբանության 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքների իրացումից ստացված հասույթ է համարվում իրավախախտման առարկա հանդիսացող կամ իրավախախտման մեջ ներգրավված ապրանքների և դրանց փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթը:

Մեթոդաբանության 15-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որպես բազային գումարի հաշվարկման միավոր ապրանքի իրացումից ստացված հասույթի չափի փոխարեն հիմք է ընդունում տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող տարվա ընդհանուր հասույթի չափը հետևյալ դեպքերում.

1) պետական մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա անհնար է որոշել ապրանքների իրացումից ստացված հասույթի չափը, և տնտեսավարող սուբյեկտի կողմից չեն ներկայացվել ապացույցներ, այդ թվում՝ ապրանքատեսակի ողջ ծավալի վերաբերյալ, կամ.

2) պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված ապրանքների իրացումից ստացված հասույթի չափի վերաբերյալ տեղեկատվության միջև առկա է հակասություն, և գործում առկա ապացույցների հիման վրա անհնար է որոշել ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացումից ստացված հասույթի չափը:

Մեթոդաբանության 16-րդ կետի համաձայն' ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի գումարի հաշվարկումն իրականացնելիս հիմք է ընդունվում իրավախախտման դադարեցման պահին նախորդող տարվա վաճառքի հասույթը կամ ընդհանուր հասույթը:

Մեթոդաբանության 18-րդ կետի համաձայն' իրավախախտման նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի չափի հաշվարկումն իրականացվում է իրավախախտման դադարեցման պահին նախորդող, բայց ոչ ավելի քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի ապրանքի իրացումից ստացված հասույթի կամ ընդհանուր հասույթի չափից:

Տվյալ պարագայում, գործի փաստական հանգամանքներով հիմնավորվում է, որ Ընկերությունները սույն որոշմամբ նկարագրված գործողություններն ու վարքագիծը, ներառյալ՝ գնման ընթացակարգերի միտումնավոր խափանմանն ուղղված գործողությունները, իրականացվել են տարբեր մարմինների կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի շրջանակներում, ուստի Վարույթի շրջանակում հիմք է ընդունվում Ընկերությունների ընդհանուր հասույթը:

Մասնավորապես՝ «Դանինի» և «Տումոե» ընկերությունների դեպքում Հանձնաժողովը սույն վարչական վարույթի շրջանակում դիտարկել է իրավախախտման դադարեցման պահին նախորդող տարվա՝ 2020 թվականի ընդհանուր հասույթը:

«Դանինի» ընկերության 2020 թվականի ընդհանուր հասույթը կազմել է

ՀՀ դրամ:

«Տումոե» ընկերության 2020 թվականի ընդհանուր հասույթը կազմել է

ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ֆուդսիթի» և «Խաչմիք» ընկերությունները գրանցվել են 2021 թվականին, իսկ «Ջուզեպպե» ընկերությունը՝ 2022 թվականին, վերջիններիս դեպքում ընդհանուր հասույթի չափի հաշվարկումն իրականացվում է

իրավախախտման դադարեցման պահին նախորդող, բայց ոչ ավելի քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի ընդհանուր հասույթի չափից: Այսինքն՝ «Ֆուդսիթի», «Զուգեպպե» և «Խաչմիք» ընկերությունների ընդհանուր հասույթի չափի հաշվարկումն իրականացվում է 2022 թվականի հունիս ամսին նախորդող 12 ամսվա գործունեության շրջանակներում ստացված հասույթի հանրագումարից:

«Ֆուդսիթի» ընկերության ընդհանուր հասույթը նշված ժամանակահատվածում կազմել է ՀՀ դրամ:

«Զուգեպպե» ընկերության ընդհանուր հասույթը նշված ժամանակահատվածում կազմել է ՀՀ դրամ:

«Խաչմիք» ընկերության ընդհանուր հասույթը նշված ժամանակահատվածում կազմել է ՀՀ դրամ:

*Իրավախախտման ծանրության խումբը.*

Հիմք ընդունելով Մեթոդաբանության 20-րդ կետի 1-ին ենթակետը' սույն գործով ծանրության խումբը պետք է հաշվարկել տոկոս դրույքաչափով:

*Իրավախախտման տևողությունը.*

Ընկերությունների կողմից իրավախախտման կատարման ժամանակահատվածը , հետևաբար, հիմք ընդունելով Մեթոդաբանության 23-րդ կետը՝ իրավախախտման տևողության գործակիցը է:

Վերոնշյալից բխում է, որ տուգանքների բազային գումարները կազմում են.

*«Դանինի» ընկերության մասով.*

Բ= Հ x Խ x Ժ= x 6% x = 3 401 509 ՀՀ դրամ:

*«Տումոե» ընկերության մասով.*

Բ= Հ x Խ x Ժ= x 6% x = 53 440 ՀՀ դրամ:

*«Ֆուդսիթի» ընկերության մասով.*

Բ= Հ x Խ x Ժ= x 6% x = 5 454 699 ՀՀ դրամ:

*«Զուգեպպե» ընկերության մասով.*

Բ= Հ x Խ x Ժ= x 6% x = 336 617 ՀՀ դրամ:

*«Խաչմիք» ընկերության մասով.*

Բ= Հ x Խ x Ժ= x 6% x = 1 460 379 ՀՀ դրամ:

***Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.***

Մեթոբանության 31-րդ կետի համաձայն' Հանձնաժողովը դիտարկում է ծանրացնող և մեղմացնող հանգամանքները և վարչական ակտում արտացոլում միայն այն հանգամանքները, որոնք հաստատվել են համապատասխան վարույթի ընթացքում:

Մեթոդաբանության 32-րդ կետի համաձայն՝ մեղմացնող հանգամանքի առկայության ապացուցման բեռը կրում է վարույթով պատասխանողը:

Մեթոդաբանության 27-32-րդ կետերով սահմանված են պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև սահմանված են բազային գումարից ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հաշվարկման դրույքաչափերը:

Սույն գործով պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներն են.

**Իրավախախտման հնարավոր կամ փաստացի բացասական ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա.** Ընկերությունների կողմից դրսևորած վարքագծի արդյունքում գնման ընթացակարգերի հնարավոր այլ մասնակիցները չեն ունեցել գնման ընթացակարգերին հավասար մրցակցային պայմաններում մասնակցելու հնարավորություն, ինչը բացասական ազդեցություն է ունեցել մրցակցային իրավիճակի վրա:

Ընդ որում, որոշ գնման ընթացակարգերի դեպքում շահառուների խումբը առավել խոցելի է, իսկ գնման առարկան՝ առաջնային անհրաժեշտության, ինչի վերաբերյալ հիմնավորումներն որոշմամբ ներկայացված են: Նման պայմաններում, Նախարարության ենթակայությանը հանձնված սոցիալական աջակցության ապահովումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություններին խնամքի հիմնական և կարևորագույն բաղադրիչ հանդիսացող սննդամթերքի մատակարարումներն իրականացվել են ուշացումներով:

**Տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները կամ հանգամանքները.** Ընկերությունները, միմյանց հետ պայմանավորվածություններ ձեռք բերելով, միտումնավոր խափանել են գնման ընթացակարգերը, որպեսզի ստանան մրցակցային առավելություն հնարավոր այլ մասնակիցների նկատմամբ և գնման ընթացակարգերի ամփոփման արդյունքում ընտրված մասնակից ճանաչվեն հնարավորինս շատ չափաբաժինների մասով: Բացի այդ, Ընկերությունների կողմից գնման ընթացակարգերի շրջանակներում ակնհայտ դիտավորությամբ դրսևորած վարքագիծն ու գործողությունները խափանել են պետական մարմինների բնականոն գործունեությունը՝ լիովին խաթարելով գնման ընթացակարգերի սահմանված ժամկետներում իրականացումը և ապրանքների ձեռքբերումը:

Նման պայմաններում, պետական մարմինների կողմից պահանջվել են ներդնել լրացուցիչ ջանքեր և ռեսուրսներ գնման ընթացակարգերի իրականացման միջոցով սեփական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները ձեռքբերելու նպատակով: Մասնավորապես՝ Ընկերությունների վերոնշյալ վարքագծի արդյունքում խափանվել են Նախարարության կողմից կազմակերպված գնման ընթացակարգերը և Նախարարության կողմից լրացուցիչ ռեսուրսների ներդրմամբ ընթացակարգերը պարբերաբար վերահրապարակվել են, իսկ Ընկերությունները շարունակել են նույնանման վարքագծի դրսևորումը:

Սույն գործով պատասխանատվությունը մեղմացնող որևէ հանգամանք Հանձնաժողովի կողմից չի հաստատվել:

Այսպիսով, ծանրացնող հանգամանքների դրույքաչափերի հանրագումարը կազմում է 30%, իսկ մեղմացնող հանգամանքների դրույքաչափը՝ 0%:

***<u>Տուգանքի հաշվարկը</u>***.

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքների չափերը, համաձայն հետևյալ հաշվարկի, կազմում են.

*«Դանինի» ընկերության մասով.*

Տ= Բ + Բ x (Ծ - Մ) = 3 401 509 + 3 401 509 x ( 30% - 0%) = 4 421 962 ՀՀ դրամ:

*«Տումոե» ընկերության մասով.*

Տ= Բ + Բ x (Ծ - Մ) = 53 440 + 53 440 x ( 30% - 0%) = 69 472 ՀՀ դրամ:

*«Ֆուդսիթի» ընկերության մասով.*

Տ= Բ + Բ x (Ծ - Մ) = 5 454 699 + 5 454 699 x ( 30% - 0%) = 7 091 109 ՀՀ դրամ:

*«Ջուզեպպե» ընկերության մասով.*

Տ= Բ + Բ x (Ծ - Մ) = 336 617 + 336 617 x ( 30% - 0%) = 437 602 ՀՀ դրամ:

*«Խաչմիք» ընկերության մասով.*

Տ= Բ + Բ x (Ծ - Մ) = 1 460 379 + 1 460 379 x ( 30% - 0%) = 1 898 493 ՀՀ դրամ:

Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների համադրության արդյունքում և հիմք ընդունելով թիվ 395-Ն որոշումը, Հանձնաժողովն արձանագրում է, որ փոխկապակցվածություն ունեցող «Դանինի», «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» ընկերությունների կողմից միաժամանակ միևնույն գնման ընթացակարգերին անիրատեսական բարձր գնային առաջարկներ ներկայացնելով մասնակցելու, դրա շրջանակում սակարկությունների ընթացքում կոնկրետ չափաբաժինների մասով չհիմնավորված նվազեցումներ կատարելու, միաժամանակ մյուս չափաբաժինների մասով ոչ իրատեսական բարձր գներից նվազեցումներ իրականացնելուց ձեռնպահ մնալու՝ այդպիսով ընտրված մասնակից ճանաչվելուց խուսափելու, գնման ընթացակարգերը միտումնավոր խափանելու գործողությունների ու վարքագծի դրսևորմամբ պետական գնումների արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերմամբ հորիզոնական հակամրցակցային համաձայնության համար՝

1. «Դանինի» ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել 4 421 962 (չորս միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար ինը հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամի չափով տուգանք:
2. «Տումոե» ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել 69 472 (վաթսունինը հազար չորս հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամի չափով տուգանք:
3. «Ֆուդսիթի» ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել 7 091 109 (յոթ միլիոն իննսունմեկ հազար մեկ հարյուր ինը) ՀՀ դրամի չափով տուգանք:
4. «Ջուզեպպե» ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել 437 602 (չորս հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր երկու) ՀՀ դրամի չափով տուգանք:
5. «Խաչմիք» ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել 1 898 493 (մեկ միլիոն ութ հարյուր իննսունութ հազար չորս հարյուր իննսուներեք) ՀՀ դրամի չափով տուգանք:

***4) Ընկերությանը հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ.***

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Տվյալ դեպքում Ընկերությունների կողմից իրավախախտումը կատարվել է 2021 թվականի նոյեմբերի 1-ից 2022 թվականի հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածում, հետևաբար տվյալ պահին այն դադարել է, որպիսի պայմաններում Հանձնաժողովն արձանագրում է, որ Ընկերություններին հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

***4. Եզրափակիչ մաս.***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և վերջինիս ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար սննդամթերքի մատակարարում» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանն է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և վերջինիս ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար անհրաժեշտ սննդամթերքի մատակարարման ծառայությունների ամբողջությունը, իսկ աշխարհագրական սահմանը՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը:

2. «Դանինի» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման, «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» սահմանափակ պատասխանատվությամբ միմյանց հետ փոխկապակցված ընկերությունների կողմից միաժամանակ միևնույն գնման ընթացակարգերին մասնակցելու, միևնույն գնման ընթացակարգերի շրջանակներում անիրատեսական բարձր գնային առաջարկներ ներկայացնելու, սակարկությունների ընթացքում կոնկրետ չափաբաժինների մասով չհիմնավորված նվազեցումներ կատարելու, միաժամանակ մյուս չափաբաժինների մասով ոչ իրատեսական բարձր գներից նվազեցումներ իրականացնելուց ձեռնպահ մնալու՝ այդպիսով ընտրված մասնակից ճանաչվելուց խուսափելու, գնման ընթացակարգերը միտումնավոր խափանելու գործողությունների ու վարքագծի դրսևորմամբ պետական գնումների արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունները որակել որպես հորիզոնական հակամրցակցային համաձայնության կնքում (այսուհետ՝ **Օրենքի խախտում**):

3. Օրենքի խախտման համար «Դանինի» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման նկատմամբ նշանակել 4 421 962 (չորս միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար ինը հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամի չափով տուգանք:

4. Օրենքի խախտման համար «Տումոե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 69 472 (վաթսունինը հազար չորս հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամի չափով տուգանք:

5. Օրենքի խախտման համար «Ֆուդսիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 7 091 109 (յոթ միլիոն իննսունմեկ հազար մեկ հարյուր ինը) ՀՀ դրամի չափով տուգանք:

6. Օրենքի խախտման համար «Զուգեպպե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 437 602 (չորս հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր երկու) ՀՀ դրամի չափով տուգանք:

7. Օրենքի խախտման համար «Խաչմիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել 1 898 493 (մեկ միլիոն ութ հարյուր իննսունութ հազար չորս հարյուր իննսուներեք) ՀՀ դրամի չափով տուգանք:

8. Սույն որոշումն «Դանինի» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման, «Տումոե», «Ֆուդսիթի», «Զուգեպպե» և «Խաչմիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից յուրաքանչյուրի նկատմամբ ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Դանինի» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանմանը, «Տումոե», «Ֆուդսիթի», «Զուգեպպե» և «Խաչմիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին հանձնելուն հաջորդող օրվանից:

9. Սույն որոշման 3-7-րդ կետերը դրանցով նշանակված տուգանքը մինչև սույն որոշման անբողոքարկելի դառնալը չվճարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

10. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

11. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հոկտեմբերի 28

Երևան